

## ԽՆՑԵՂԵՆ

Տեղադրված են դամբարանի ներսում և արտաքուստ՝ դամբանախցի վրա: Դրանք միջին մեծության, ձգված իրանով, հարթահատակ, բերանի հատվածում դեպի դուրս լայնացող պսակով կարասի ռեկորներ են, գնդաձև իրանով ջրամաններ (երկուսը), ջնարակապատ տափաշներ (կոկին երկուսը) քառանկյուն կտրվածքով ջրակ և այլն:

Ջրամաններն ու տափաշներից մեկը ընկած են եղել ծիսական կոակո մեջ, որից մասամբ այրվել են, միտովել, ստացել թուխ գույն (աղ. XII, 1,2), մասնակիորեն ձևափոխվել (տափաշիչը և ճրագը): Թե՛՛ կոակոց խաթարվել են ու արդյունքում կարասի ռեկորներն իրար լավ չեն կպչում:

Ուշագրավ են ջնարակապատ տափաշները (րարձր.՝ 14,7-14, 4 սմ): Պատրաստված են դեղնավուն մանրահատիկ կավից, ձեռածեփ: Երկու կեսերը առանձին-առանձին ծեփելուց հետո, ներճկված ժապավենով միացրել են իրար, ապա տեղադրել վիզը (աղ. XII, 3,5): Անոթներից մեկի վիզը գլանաձև է, դեպի դուրս լայնացող ներճկված պսակով (տր.՝ 4 սմ), իրանը՝ երկու կողմից ուռուցիկ: Ուռուցիկը նեղ են կպած իրանին, ջնարակը՝ խամիած երկնագույն, տեղ-տեղ թափված: Ուռուցիկ կողերը հարդարված են ակոսավոր գոտիներով, ԼՂուս տափաշիչն ունի միակողմանի ուռուցիկ իրան, կենտրոնում՝ գույգ-գույգ համակենտրոն ակոսավոր շրջաններ, շեփորաձև վիզ, լայն կանթեր ուսերի վրա: Ջնարակը կանաչավուն, հաստ շերտով, համաչափ:<sup>381</sup> Հայաստանում հայտնի են Արտաշատից, Արմավիրից և այլ վայրերից:<sup>382</sup> Դրանցից ամենախոշորն ու ուշագրավի Արտաշատի առաջին ըլուրում գտնվածն է (րարձր.՝ 24 սմ): Իսկ չորրորդ ըլուրում գտնված տափաշիչը (րեկորային) պատրաստված է տեղական դարչնագույն կավից, մոխրագույն ջնարակապատ հենքով, նկարազարդված կապտականաչավուն ջնարակե գլորչի ժապավեններով,

Ջնարակած տափաշի հիանալի մի օրինակ հայտնարեվել է Արտաշատի VIII ըլրում (19մ/քառ. 1980թ. հորից): Այն օվալաձև տեսք ունի, իսկ սեղմված կողերին՝ կենաց ծասի ռելիեֆ պատկերներ (չորս): Պատրաստված է կաղապարի մեջ սեղմելու եղանակով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ջնարակած խեցեղենի արտադրությունը Հայաստանում սկսվել է մ.թ.ա. II դարում և լայն տարածում ստացել մ.թ.ա. I - մ.թ. IIդդ., կապված Հայաստանում ապակեգործության զարգացման հետ: Հայաստանից գտնված ջնարակած խեցեղենը առավելապես կոկնում է տեղական ոչ ջնարակապատ անոթների ձևերը,

<sup>381</sup> Ժ.Դ.Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը, ՊԲՀ, 1977, № 3, էջ 184, 185, աղ. I, 4, 5:

<sup>382</sup> Նույն տեղում, էջ 183-194, աղ. I-V:

պատրաստված է կիկին տեղական դարչնագույն և դեղնավուն, ավազախառն կավրոց: Չնայած առաջավորասիական կենտրոնների ջնարակած խեցեղենին ևս հատուկ են գունավոր գարդերը, սակայն Արտաշատի ջնարակած խեցեղենի գունագեղ գարդերը առավել սիպական են տեղական խեցեղենին, հատկապես շրջանաձև գարդերը: Արտաշատը Հայաստանի անտիկ շրջանի ջնարակապատ լավագույն խեցեղենի արտադրության խոշոր կենտրոններից մեկն էր:

Ջնարակած տափաշներ հայտնի են Առաջավոր Ասիայի շատ հնավայրերից:<sup>383</sup> Դրանք տարբեր չափերի են (5.8 սմ-ից մինչև 29սմ) և ունեն հավասարապես սեղմված կամ միակողմանի ուռուցիկ կողեր:<sup>384</sup> Սիսիանի տափաշներն իրենց ձևերով ավելի շատ կապվում են Աելևկիայի արտադրանքին (մ.թ.ա. I դար) և կարող են ներմուծված լինել այնտեղից: Ծառայել են որպես օժանելիքի տարա:

Խեցեղեն մյուս անոթները գնդաձև իրանով, երկեանթանի, թուխ, փայլեցրած մակերեսով ջրամաններ են՝ պատրաստված սև ու սպիտակ ավազախառն կավրոց (մեկի բարձր. 29սմ, պս. տր.՝ 10.4սմ, մյուսինը՝ բարձր.՝ 27սմ, պս. տր.՝ 8սմ): Ունեն դուրս թեքված կլորավուն պսակներ:

Հայաստանում գնդաձև ջրամաններ հայտնաբերվել են Արմավիրում, Արտաշատում, Վայքի Մարտիրոս գյուղում, Դվրնում<sup>385</sup> և վերաբերում են մ.թ.ա. I դարի երկիորդ կեսին:

Հելլենիստական Հայաստանում մ.թ.ա. I դարի կեսերից երևան են գալիս գնդաձև ջրամանները, որոնք, աստիճանաբար տարածվելով, մ.թ. I դարում գործածությունից դուրս են մղում տափաշները: Գնդաձև ջրամանները պատրաստվում էին դուրգի վրա, որը և հեշտացնում էր արտադրությունը:

Սիսիանի գնդաձև ջրամանները դրանց վաղագույն օրինակներն են:

<sup>383</sup> Եռյն տեղում, էջ 186:

<sup>384</sup> Ժ.Ղ. Խաչատրյան, Արտաշատ, II, էջ 121, 122, տախտ. XVII, 2:

<sup>385</sup> Եռյն տեղում, էջ 107, 121, նկ.42<sub>1</sub>, 45<sub>1</sub>, 46<sub>1,3,4</sub>, 58, տախտ. VII.3,4, VIII.2, Գ.Գ.Քոչարյան, Հելլենիստական դարաշրջանի դամբարան Դվրնում, ՊԲՀ, 1980, № 2, էջ 278, աղ. I, 1: